# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 3
# 03.03.2023թ. կնքված ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/30-2 գնման պայմանագրի

ք. Երևան 22.08. 2023թ.

<<Նորք-Մարաշ>> բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Մ. Ադամյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, <Կուդոս>> ՍՊԸ, ի դեմս տնօրեն Լ. Թորոսյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետև կողմեր, ղեկավարվելով ՀՀ գնումների մասին օրենսդրությամբ, ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 03.03.2023թ. կնքված ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/30-2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 կետը փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

## 1. Պայմանագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով կողմերը որոշեցին՝

1.1 Սույն պայմանագրի հավելված 1-ի 33-րդ չափաբաժնում կատարել փոփոխություն և <<Մակերեսային էլեկտրոդների հավաքածու>> ապրանքի մեկ հատի գինը 472500 /չորս հարյուր յոթանասուներկու հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամից նվազեցնել և սահմանել 450000 /չորս հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ: Նվազեցումը կատարել համաձայնագիրը կնքելու պահին առկա մնացորդային քանակների նկատմամբ:
1.2 Սույն համաձայնագրի 1.1 կետում նշված պայմանը կգործի մինչև տվյալ պայմանագրի գործողության ժամկետի ավարտը:

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:
2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:
2.3 Սույն համաձայնագիրը կազմված 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**Պատվիրատու**

«Նորք Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ
ք. Երևան, Արմենակյան 108/4
ՀՎՀՀ 01508793
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150001612200100

---------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

<<Կուդոս>> ՍՊԸ
ք. Երևան, Կոմիտաս 63/99
ՀՎՀՀ 00129202
2050022376541001
<<Ինեկոբանկ>> ՓԲԸ
gnumner.kudos@gmail.com
091-53-93-81
Լ. Թորոսյան

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ.